

## ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանի հարյուրօրյա պաշտոնավարման արդյունքների մասին

Ք. Եղեգնաձոր 07.02. 2020թ.

Ընդհանուր տեղեկություններ

Վայոց ձորի մարզը զբաղեցնում է 2308 քառ. կմ տարածք, որը կազմում է հանրապետության տարածքի 7.8 տոկոսը: Մարզն ունի 8 համայնք, որից խոշորացված՝ 6-ը: Բոլոր համայնքներն ու բնակավայրերը գտնվում են նախալեռնային և լեռնային գոտիներում:

Մարզի 2 համայնքների (Արենի համայնքի Արենի և Խաչիկ և Ջառիթափ համայնքի Բարձրունի, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս) բնակավայրերը սահմանամերձ են: Բնակչության թիվը կազմում է 60357 մարդ, այդ թվում ներառված են նաև բանակ զորակոչվածները:

Վայոց ձորի մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: 2019 թվականին արտադրվել է (մոտավոր) 24,4 միլիարդ դրամի համախառն գյուղատնտեսական արտադրանք: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 407 հազար դրամի արտադրանք: Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6622,9 հա, որից՝ վարելահող՝ 2599,8 հա: Ոռոգելի վարելահողերը կազմում են ընդհանուր վարելահողերի 17 տոկոսը:

Մարզային ենթակայության կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ Պաշտոնավարման առաջին իսկ օրվանից (01.11.2019թ.) մարզպետ Արարատ Գրիգորյանի ուշադրության կենտրոնում մշտապես եղել են մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների, հանրակրթական և մշակութային հաստատությունների գործունեությունը: Հանդիպումներ են կազմակերպվել կրթական և մշակութային հաստատությունների և առողջապահական կազմակերպությունների ղեկավարների հետ, որտեղ քննարկվել են մարզում կրթության որակի բարձրացման, բուժսպասարկման բարելավման, մարզական և մշակութային միջոցառումների պատշաճ կազմակերպման հետ առնչվող խնդիրները:

Այցելություններ համայնքներ

Հարյուրօրյա պաշտոնավարման ընթացքում՝ 2019 թվականի նոյեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 12-ը մարզպետն այցելել է մարզի բոլոր համայնքներ և բնակավայրեր, ծանոթացել համայնքներում կատարվող աշխատանքներին, համայնքների բնակիչներին հուզող հարցերին և լուծում պահանջող առկա խնդիրներին, որոնց լուծում տալու նպատակով քննարկումներ են կազմակերպել մարզպետարանի աշխատակիցների և համապատասխան այլ պաշտոնյաների հետ:

Մարզպետի մոտ մարզի համայնքների ղեկավարների մասնակցությամբ կայացել են համայնքային խնդիրներին և համայնքների սեփական եկամուտների հավաքագրմանը վերաբերող քննարկում-խորհրդակցություններ:

Մարզի տարածքում համագործակցություն և համակարգում

Մարզպետ Արարատ Գրիգորյանը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է Վայոց ձորի թեմի, ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի հրամանատարության հետ և համակարգել է ՀՀ ԳՄ Վայոց ձորի տարածքային ծառայությունների գործունեությունը: Համակարգվել և կազմակերպվել է 2019 թվականի ձմեռային զորակոչը:

Աշխատանքային հանդիպումներ

Մարզպետն աշխատանքային հանդիպումներ է ունեցել միջազգային կառույցների հայաստանյան գրասենյակների ներկայացուցիչների, մարզում արտադրական և գյուղատնտեսական, բարեգործական, ներդրումային և այլ գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

Արտաքին հարաբերություններ

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը հյուրընկալել է ՌԴ Արխանգելսկի մարզի հայ համայնքի ղեկավար, ոչ կոմերցիոն կազմակերպության տնօրեն Մամիկոն Գեկչյանին: Հանդիպմանը քննարկվել են, ՌԴ Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև կնքված <Համագործակցության համաձայնագրի> շրջանակներում, Վայոց ձորի մարզում արտադրվող գյուղատնտեսական մթերքները (չիր, պանիր) ՌԴ Արխանգելսկի մարզ արտահանելու հետ կապված խնդիրները:

Ներդրումներ և այլ ծրագրեր

2020 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում կիրականացվի 6 ներդրումային ծրագիր: